

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Արաջյան Հակոբ Գագիկի**

**3D սպինային ապակու մոդելավորումը հաշվի առնելով արտաքին  
դաշտում համակարգի ռելաքսացիան**

Ե.13.05 «Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի  
համալիրներ» մասնագիտությամբ  
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՍԱԳԻՐ**

Երևան - 2012

---

---

**ИНСТИТУТ ПРОБЛЕМ ИНФОРМАТИКИ И АВТОМАТИЗАЦИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА**

**Абаджян Акоп Гагикович**

**Моделирование 3D спинового стекла с учетом релаксации  
системы во внешнем поле**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата физико-  
математических наук  
по специальности 05.13.05 “Математическое моделирование,  
численные методы и комплексы программ”

Երևան – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում

Գիտական ղեկավար՝	Ֆ. մ. գ. դ.	Ա. Ս. Գևորգյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Ֆ. մ. գ. դ. տ. գ. թ.	Հ. Բ. Մարանջյան Ռ. Գ. Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի Ֆիզիկայի Ինստիտուտ) Հիմնադրամ

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. մայիսի 3-ին, ժամը 16.00-ին ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի 037 «Ինֆորմատիկա և հաշվողական համակարգեր» մասնագիտական խորհրդի նիստում, հետևյալ հասցեով՝ 0014, Երևան, Պ.Սևակի 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ի գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2012թ. ապրիլի 2-ին:

037 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, Ֆ. մ. գ. դ.



Հ. Գ. Սարուխանյան

---

Тема диссертации утверждена в Институте проблем информатики и автоматизации НАН РА

Научный руководитель:	д.ф.м.н.	А. С. Геворкян
Официальные оппоненты:	д.ф.м.н. к.т.н.	Г. Б. Маранджян Р. Г. Акопян


Ведущая организация: Национальная научная лаборатория имени А. И. Алиханяна (Ереванский институт физики) фонд

Защита состоится 3 мая 2012г. в 16.00 часов на заседании специализированного совета 037 “Информатика и вычислительные системы” Института проблем информатики и автоматизации НАН РА по адресу: 0014, Ереван, ул. П. Севака 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИПИА НАН РА.

Автореферат разослан 2 апреля 2012г.

Ученый секретарь специализированного совета 037, д.ф.м.н.



А. Г. Саруханян

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Թեմայի արդիականությունը

Բնության և մարդկային հասարակության մեջ բարդ համակարգերը վիճակագրական հավասարակշռության սահմանում նկարագրվում են որոշակի պարամետրերի միջոցով, որոնք շատ հաճախ մեծ արդյունավետությամբ հնարավոր է մոդելավորել չկարգավորված սպինային համակարգերի միջոցով: Նշենք, որ դասական Հեյզենբերգի Համիլտոնիանի շրջանակներում կատարվել են բազմաթիվ տեսական և թվային հետազոտություններ, սակայն նրանք հիմնականում վերաբերվում են միաչափ և երկչափանի մոդելներին: Շատ ավելի քիչ են այն հետազոտությունների քանակը, որոնք վերաբերվում են երեք և ավելի չափողականություններով մոդելներին և հատկապես դրանց քվանտային տարբերակներին: Հիշեցնենք, որ մեծ չափողականությամբ խնդիրների հետազոտություններն, որպես կանոն, իրականացվում են թվային մոդելավորման ճանապարհով: Ինչպես ցույց է տալիս այս ուղղության զարգացման ներկայիս դրությունը, նույնիսկ համեմատաբար փոքր թվով սպինային համակարգերի թվային մոդելավորումը բավականին դժվար հաշվողական խնդիր է և այն հնարավոր է իրականացնել միայն ժամանակակից գերհամակարգիչների վրա: Չկարգավորված սպինային համակարգերի կարևոր դաս է հանդիսանում *սպինային սպակինները*: Այդ համակարգերի մոդելավորման միջոցով, նյութի վրա գործադրված արտաքին ազդակի տարածա-ժամանակային մասշտաբների վրա, հնարավոր է ստանալ շատ կարևոր գիտական տեղեկատվություն նյութի կառուցվածքի և հատկությունների վերաբերյալ: Նշված հետազոտություններն արդիական են հատկապես ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման տեսանկյունից, որոնց տարածա-ժամանակային մասշտաբները *նանո*, այսինքն  $10^{-9}$  կարգի են:

Նկատենք, որ վիճակագրական համակարգերի ուսումնասիրման համար հիմնական մաթեմատիկական օբյեկտ է հանդիսանում *վիճակագրական գումարը* (partition function), որն օգտագործելով հնարավոր է կառուցել համակարգի բոլոր թերմոդինամիկական պոտենցիալները, օրինակ, Շենոնի էնտրոպիան, Հելմհոլցի ազատ էներգիան և այլն, ինչպես նաև հաշվել համակարգի բոլոր վիճակագրական պարամետրերը: Վիճակագրական գումարի ներկայացման ընդունված ձևերից է Բոյցմանի կշռային ֆունկցիայով բազմակի ինտեգրալային ներկայացումը կոնֆիգուրացիոն տարածությունում:

Այնհայտ է, որ վիճակագրական գումարի սահմանումը ճիշտ է, եթե տրված է ինտեգրման տիրույթը: Դիտարկվող խնդրում սակայն ինտեգրման տիրույթը հանդիսանում է բազմաչափ տոպոլոգիական տարածություն, որը չափազանց դժվար է հետազոտման տեսանկյունից: Նշենք, որ մինչև այժմ վիճակագրական գումարը և նրա ածանցյալները հաշվարկվում են ամբողջ կոնֆիգուրացիոն տարածության մեջ՝ որոշ մոդելների համար անալիտիկորեն, բայց հիմնականում Մոնտե-Կառլո ալգորիթմի կամ նրա տարբեր ձևափոխությունների վրա հիմնված ալգորիթմների թվային մոդելավորմամբ: Սակայն նշված ալգորիթմների միջոցով իրականացված հաշվարկների հավաստիությունը, մաթեմատիկական տեսանկյունից ակնհայտ չէ և առավել ևս սպառնուցիվ է: Մոդելավորման խնդիրները սկսում են ավելի բարդանալ, երբ մենք փորձում ենք հետազոտել վիճակագրական և դինամիկ երևույթները, որոնք նշված համակարգում առաջանում են արտաքին ազդակների կիրառմամբ՝ այդ ազդակներին

տարածա-ժամանակային մասշտաբների վրա: Նշված դեպքում հաշվարկները որպես կանոն ուղեկցվում են մեծ և անկանխատեսելի սխալներով:

Այսպիսով, մաթեմատիկորեն հիմնավորված մեթոդների և գուգահեռ ալգորիթմների մշակումը, որոնք թույլ կտան թվայնորեն մոդելավորել  $3D$  սպինային ապակու վիճակագրական հատկությունները արտաքին դաշտերի տարածա-ժամանակային պարբերությունների մասշտաբների վրա, հանդիսանում է կարևոր արդիական խնդիր:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները**

Աշխատանքի հիմնական նպատակն է առաջարկել նոր մոտեցումներ, որոնք թույլ կտան վիճակագրական հավասարակշռության սահմանում առավել ճշգրիտ հաշվել  $3D$  սպինային ապակու բոլոր վիճակագրական պարամետրերը: Հետևաբար, աշխատանքի հիմնական խնդիրներն են.

- Հետազոտել կամայական երկարությամբ չկարգավորված  $1D$  տարածական սպինային շղթաների արտաքին դաշտով չխտորված *իդեալական* (սպիները փոխազդում են միայն շղթայի ներսում) *համույթի* (unperturbed ideal ensemble) վիճակագրական հատկությունները: Կառուցել համակարգի բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները, այդ թվում սպին-սպին փոխազդեցության հաստատունի բաշխման ֆունկցիան համույթի *հիմնական վիճակում* (սպինային համակարգի մինիմալ էներգիայի վիճակում),
- Հետազոտել  $1D$  *իդեալական համույթի* վիճակագրական հատկությունները արտաքին դաշտի տարածա-ժամանակային պարբերությունների մասշտաբների վրա,
- Հետազոտել  $1D$  *իդեալական համույթի* վիճակագրական հատկությունները՝ հաշվի առնելով համակարգում ընթացող ռելաքսացիոն երևույթները: Մշակել գուգահեռ ալգորիթմ՝ *ֆրաստրացված համակարգի* (frustrated system) մոդելավորման համար, ներառյալ այն կետերում, որտեղ համակարգը ցուցաբերում է կրիտիկական հատկություններ,
- $3D$  սպինային ապակիների բերելիության հնարավորությունը  $1D$  *ոչ իդեալական* (երբ շղթաների միջև փոխազդեցությունը պատահական է) *համույթին* (nonideal ensemble),
- Ստեղծել գուգահեռ ալգորիթմներ և ծրագրային փաթեթ, որը մշակված մեթոդների հիման վրա հնարավորություն կտա կառուցել բննարկված մոդելների բոլոր կարևոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները:

Նշենք, որ հետազոտությունների նշված ծավալի իրագործումը թույլ կտա ստեղծել բարդ համակարգերի լայն դասի սիմերգետիկ օրինաչափությունները մոդելավորելու համար օգտակար և կարևոր *մաթեմատիկական գործիք*:

**Հետազոտման օբյեկտներ են** հանդիսանում չկարգավորված բարդ համակարգերը, որոնք հնարավոր են նկարագրել  $3D$  պարբերական ցանցի միջոցով: Մաթեմատիկորեն դրանք ներկայացվում են սպինային ապակիների մոդելներով դասական Հեյզենբերգի մոտակա-հարևան Համիլտոնիանի (nearest-neighboring Hamiltonian) շրջանակներում, որը սահմանվում է կանոնավոր  $3D$  դիսկրետ ցանցի վրա:

### **Հետազոտման մեթոդները**

Հետազոտությունների ընթացքում օգտագործվել են բազմազան անալիտիկ մեթոդներ՝ ռեկուրենտ տրանսցենդենտ հավասարումների համակարգը և համապատասխան *ID* պարբերական դիսկրետ ցանցի վրա Սիլվեստրի պայմանները ստանալու համար: Դա անհրաժեշտ է, որպեսզի ստեղծվի բարձր արտադրողական ալգորիթմ՝ *հիմնական վիճակում* գտնվող (ground state) սպինային շղթաների ճշգրիտ մոդելավորման համար: Համիլտոնիան մեխանիկան, սպինային համակարգի Հեյզենբերգի մոդելը, Բիրկհոֆֆի էրգոդիկ կանխադրույթը և հավանականության տեսության ընդունված սահմանումները օգտագործվել են վիճակագրական համակարգի տարբեր բաշխումների կառուցման և հաշվարկման համար: Խնդրի տարբեր փուլերի թվային մոդելավորման և համապատասխան թվային տվյալների տեսանելիացման (visualization) համար օգտագործվել են *Matlab/Octave*, *Mathematica*, *ALPS*, *Plot*, *MAPPLE*, *Gnu Scientific Library* հայտնի ծրագրային փաթեթները:

### **Արդյունքների գիտական նորույթը**

Ատենախոսությունում հետազոտվել է *3D* սպինային ապակի համակարգը՝ դիսկրետ ցանցի վրա ռեկուրենտ հավասարումների համակարգի ճշգրիտ մոդելավորման եղանակով: Սպինային ապակի համակարգում ռելաքսացիոն երևույթները, որոնք առաջանում են արտաքին ազդակների առկայությամբ, դիտարկվում են կոմպլեքս-դասական հետազոտների (complex-classical trajectories) ներկայացման շրջանակներում: Նշված խնդիրների լուծման համար ստեղծվել է յուրօրինակ ծրագրային փաթեթ: Նշված խնդիրների թվային մոդելավորման համար մշակվել է բարձր արտադրողական ալգորիթմներ և համապատասխան մաթեմատիկական գործիք: Ատենախոսության մեջ ստացված բոլոր տեսական, ալգորիթմական և ծրագրային արդյունքները *նոր* են:

### **Ստացված արդյունքների կիրառական նշանակությունը**

Դիտարկված մոդելների կիրառությունների ոլորտները չափազանց լայն են: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ֆիզիկայի, քիմիայի, նյութագիտության, կենսաբանության, էվոլյուցիայի, կազմակերպության դինամիկայի, բարդ օպտիմիզացիայի, բնապահպանության և սոցիոլոգիական կառույցների, մարդկային տրանսբանության համակարգերի, ֆինանսական մաթեմատիկայի և այլ բնագավառներում:

### **Ներդրումներ**

Մշակվել է ծրագրային փաթեթ, որը հնարավորություն է տալիս *կլաստերային հաշվողական համակարգում* (*ArmCluster*-ի միջավայրում) և ընհանուր նշանակության համար նախատեսված *GPGPU* նոր զարգացող ոլորտում *գրաֆիկական քարտերի* (General-Purpose computing on Graphics Processing Units) վրա կատարել զուգահեռ հաշվարկներ՝ օգտագործելով մշակված բարձր արտադրողական ալգորիթմները, որոնք նախատեսված են արտաքին դաշտի առկայությամբ *3D* սպինային ապակիների մոդելավորմանը անհրաժեշտ բոլոր կարևոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները կառուցելու համար:

Ատենախոսության արդյունքների հիման վրա ստեղծված ծրագրային փաթեթը ներդրվել է ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ և ԻԱՊԻ ինստիտուտներում:

**Պաշտպանությանը ներկայացվում են հետևյալ դրույթները.**

- Ապացուցվել է *1D* տարածական սպինային շղթաների (SUC) *իդեալական համույթի* բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաների ճշգրիտ հաշվարկի հնարավորությունը *համակարգի հավասարակշռության սահմանում* դասական մեխանիկայի հիմնարար օրենքների շրջանակներում:
- Հաշվարկվել և կառուցվել են *1D* SUC *իդեալական համույթի* ճշգրիտ վիճակագրական բաշխումները արտաքին դաշտի տարածա-ժամանակային պարբերությունների մասշտաբների վրա: Հետազոտվել է համույթի *մագնիսականացման (բևեռացման) պարամետրի* ֆրաստրացիաների վարքը՝ կախված արտաքին դաշտի լարվածության մեծությունից: Յույց է տրվել, որ ֆրաստրացիաներն ունեն ֆռակտալ վարք:
- Յույց է տրվել, որ *1D* սպինային ապակի համակարգում արտաքին դաշտի ազդեցությամբ ընթացող ռելաքսացիոն երևույթները կարող են նկարագրվել կոմպլեքս-դասական հետազոծերի մոտեցման շրջանակներում:
- Տեսականորեն և թվային հաշվարկների ճանապարհով ցույց է տրվել, որ կոմպլեքս-դասական հետազոծերի մոտեցման շրջանակներում կարելի է հաշվարկել սպինային համակարգի բոլոր վիճակագրական հատկությունները՝ ներառյալ կրիտիկական կետերում:
- Ապացուցվել է *3D* սպինային ապակի և *1D* տարածական սպինային շղթաների *ոչ իդեալական* համակարգերի համարժեքությունը՝ Բիրկհոֆֆի էրգոդիկ կանխադրույթի տեղի ունենալու պայմանում:
- Առաջարկվել է սպինային ապակի համակարգի վիճակագրական գումարի ճշգրիտ, վերջավոր թվով ինտեգրավներով ներկայացման նոր տեսք:
- Մշակվել է նմանատիպը չունեցող մաթեմատիկական գործիք սպինային ապակիների մոդելավորման համար՝ ելնելով կոմպլեքս-դասական մեխանիկայի հիմնարար սկզբունքներից (first principles):

**Ստացված արդյունքների ասորագրահան**

Թեկնածուական աշխատանքի հիմնական արդյունքները և դրույթները քննարկվել և ներկայացվել են Դուբնայի *Միջուկային Հետազոտությունների Միավորված Ինստիտուտի* տեսական ֆիզիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների լաբորատորիաների գիտական սեմինարներում (2011թ.), ԵՊՀ *Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի* ֆակուլտետի թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի գիտական սեմինարներում (2010թ.), ԵՊՀ *Ֆիզիկայի* ֆակուլտետի ակադեմիկոս Գ.Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի սեմինարում (2011թ.), ՀՀ ԳԱԱ *Ֆիզիկայի Կիրառական Պրոբլեմների Ինստիտուտի* գիտական սեմինարներում (2011թ.), ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ գիտական սեմինարում (2011թ.), Վիճակագրական ֆիզիկա միջազգային կոնֆերանսին 2011թ. (SigmaPhi՝ 2011, Լառնակա, Կիպրոս), Հավանականության տեսության և ֆիզիկայի հիմունքներ կոնֆերանսին 2011թ. (FFP6՝ 2011, Վախշո, Շվեդիա), Ֆիզիկայի սիմետրիա մեթոդներ, պրոֆեսոր Միսակյանին նվիրված XV միջազգային կոնֆերանսին 2011թ. (SymPhys՝ 2011, Երևան, Հայաստան), GRID և վիզուալիզացիայի համակարգեր միջազգային կոնֆերանսին 2011թ. (MIPRO GVS՝ 2011, Ռիչեկա, Խորվաթիա), Արտաքին ազդեցությամբ էլեկտրոնային, պոզիտրոնային, նեյտրոնային, ռենտգենյան ճառագայթում միջազգային կոնֆերանսին 2011թ. (EPNXRSEI՝ 2011, Երևան-Մերդի, Հայաստան),

Կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ կոնֆերանսին 2011թ. (CSIT' 2011, Երևան, Հայաստան):

**Հրապարակումներ**

Ատենախոսության թեմայով հրապարակված են 9 գիտական աշխատանքներ, որոնց ցանկը բերված է սեղմագրի վերջում:

**Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը**

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 128 էջ, օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 80 անուն:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Առաջաբանում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները, ձևակերպվում են ուսումնասիրման օբյեկտն ու մեթոդները, հետազոտությունների գիտական նորույթն ու ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

**Առաջին գլխում** հակիրճ ձևակերպվում է սպինային ապակի համակարգերի հիմնախնդիրը, տրվում է միջին դաշտի տեսության (mean-field theory), Մոնտե-Կառլո և Վանդ-Լանդաու ալգորիթմների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնադրույթները, նկարագրվում է սպինային ապակի համակարգերի մոդելը, ինչպես նաև բերված է աշխատանքի համառոտ նկարագրությունն ըստ գլուխների:

§1.1-ում բերված է աշխատանքի համառոտ նկարագրությունն ըստ գլուխների:

§1.2-ում նկարագրված են սպինային ապակի տեսության մեջ օգտագործվող հիմնական մոդելների սահմանումներն ու բերված են այս աշխատանքի շրջանակներում արված նշանակումները և սահմանումները:

§1.3-ում բերված են սպինային ապակի տեսության մեջ մինչև այժմ արված հետազոտությունների հիմնական արդյունքները, և ներկայացված են սպինային ապակի համակարգերի հիմնախնդիրները: Ինչպես նաև հիմնավորված է նոր տեսական մոտեցումների անհրաժեշտությունը և զուգահեռ մոդելավորման համար մաթեմատիկական ալգորիթմների մշակման կարևորությունը:

§1.4-ում նկարագրված է դասական Մոնտե-Կառլո մեթոդը, որը մինչև այժմ օգտագործվում է սպինային ապակի համակարգերը նկարագրող բազմաչափ ինտեգրալներ հաշվելու համար՝ հիմնվելով փուլային տարածության մեջ պատահական կետերի որոնման մեթոդի վրա, որի արդյունքում գտնվում են այնպիսի նախընտրելի տիրույթներ, որոնք ունեն զգալի ներդրում ինտեգրալի հաշվման մեջ: Նշված մոտեցումն օգտագործում է Մարկովյան շղթաների գեներացիան, որն իրենից ներկայացնում է այնպիսի հաջորդականություն, երբ հաջորդ վիճակը միմյայն կախված է ներկա վիճակից և կախված չէ նախորդ վիճակներից:

§1.4.1-ում բերված է Մետրոպոլիսի ալգորիթմի նկարագրությունը: Ինչպես հայտնի է, թերմոդինամիկական մեծությունների հաշվարկներն արվում են Մարկովյան էրգոդիկ շղթաներով՝ միջինացման կանոնակարգի միջոցով: Տրված բաշխման ֆունկցիայով Մարկովյան պրոցեսների իրականացման տարբերակներից մեկը հանդիսանում է

Մետրոպոլիսի ալգորիթմը:

**§1.4.2-**ում բերված է Վանգ-Լանդաուի ալգորիթմի նկարագրությունը: Այն հանդիսանում է Մետրոպոլիսի ալգորիթմի ընդհանրացումը, որն օգտագործվում է տարբեր խնդիրների կոմպյուտերային մոդելավորման, մասնավորապես, սպինային ապակու վիճակների խտությունը հաշվելու համար:

**§1.5-**ում բերված է *ALPS* ծրագրային գործիքի հիմնական հնարավորությունների ցուցակը: Այն տրամադրում է ալգորիթմների տարբեր իրականացումներ և պատրաստի գրադարաններ՝ նախատեսված թվային մոդելավորման համար: Այն հանդիսանում է բաց կոդով ծրագիր (open-source) և յուրաքանչյուրը կարող է կատարել ցանկացած ծրագրային փոփոխություն կողի մեջ՝ ալգորիթմներն իր խնդիրն հարմարեցնելու նպատակով:

**Երկրորդ գլխում** հետազոտված են տարբեր երկարությամբ *1D* չկարգավորված տարածական սպինային շղթաների իդեալական համույթի վիճակագրական հատկությունները: Ապացուցվել է, որ սպին-սպին փոխազդեցության հաստատունը բավարարում է Լեվիի կտրված ալֆա-կայուն բաշխման օրենքին:

Կատարվել է այս խնդրի *MPI* և *CUDA* իրականացումների համեմատությունը, ինչպես նաև առաջարկվել է *MPI* և *GPU* նոր համատեղ արդյունավետ իրականացում:

**§2.1-**ում բերված է *1D* չկարգավորված տարածական սպինային շղթաների իդեալական համույթի համար սպինային ապակի մոդելի մաթեմատիկական խնդրի դրվածքը:

**Մահմանում 2.1:** Միավոր երկարության  $S_i$  վեկտորը, որն *3D* տարածության մեջ ունի պատահական ուղղորդվածություն, կոչվում է տարածական սպին:

**Մահմանում 2.2:** Վերջավոր երկարության պարբերական *1D* ցանցի վրա որոշված պատահական ուղղորդվածությամբ սպինների բազմությունը կոչվում է չկարգավորված տարածական սպինային շղթա:

**Մահմանում 2.3:** Սպինային շղթայում կամայական 2 հարևան  $S_i$  և  $S_{i+1}$  տարածական *1D* սպիններ փոխազդում են միմյանց հետ պատահականորեն:  $J_{i, i+1}$  կոչվում է պատահական փոխազդեցության հաստատուն  $i$  և  $i+1$  սպինների միջև, որը կարող է ընդունել դրական և բացասական արժեքներ: Նշենք, որ  $0 \leq i \leq N_x - 1$ ,  $N_x$ -ն սպինային շղթայում սպինների թիվն է:

**Մահմանում 2.4:** Գասական չկարգավորված տարածական *1D* սպինային շղթաների իդեալական համույթ է կոչվում չկարգավորված տարածական *1D* սպինային շղթաների բազմությունը, երբ սպինային շղթաների միջև փոխազդեցությունը բացակայում է (տես Նկ. 1):


**Մահմանում 2.5:** Հետևյալ արտահայտությունը

$$H_o(N_x) = - \sum_{i=0}^{N_x-1} J_{i, i+1} S_i S_{i+1}$$

կոչվում է Հեյզենբերգի մոտակա-հարևանների *1D* սպինային ապակու Համիլտոնիան առանց արտաքին դաշտի առկայության, որտեղ  $N_x$ -ն շղթայում առկա սպինների թիվն է:

Լոկալ մինիմումի կայունության պայմանը  $i$ -րդ սպինի համար հետևյալն է.





Նկար 1:  $L_x = d_0 N_x$  երկարությամբ չկարգավորված տարածական  $ID$  սպինային շղթա է պատահական փոխազդեցություններով, որտեղ  $d_0$ -ն մոտակա-հարևան սպինների հեռավորությունն է,  $N_x$ -ն շղթայում սպինների քանակն է, իսկ  $(\varphi_i, \psi_i)$ -ն  $S_i$  սպինի տարածական ուղղորդվածությունն է:

$$\frac{\partial H_o}{\partial \psi_i} = 0, \quad \frac{\partial H_o}{\partial \varphi_i} = 0,$$

և համապատասխան Սիլվեստրի անհավասարությունները

$$A_{\psi_i, \psi_i}(\Theta_i^0) > 0, \quad A_{\psi_i, \psi_i}(\Theta_i^0) A_{\varphi_i, \varphi_i}(\Theta_i^0) - A_{\psi_i, \varphi_i}^2(\Theta_i^0) > 0,$$

որտեղ  $\Theta_i = (\psi_i, \varphi_i)$ -ն սֆերիկ կոորդինատային համակարգում  $i$ -րդ սպինի անկյուններն են, իսկ  $A_{\alpha_i, \alpha_i}(\Theta_i) = \partial^2 H_0 / \partial \alpha_i^2$ ,  $A_{\alpha_i, \beta_i}(\Theta_i) = A_{\beta_i, \alpha_i}(\Theta_i) = \partial^2 H_0 / \partial \alpha_i \partial \beta_i$ :

Խնդիրը կայանում է նրանում, որ պահանջվում է կամայական տրված  $L_x = d_0 N_x$  երկարությամբ չկարգավորված տարածական  $ID$  սպինային շղթաների համույթի համար կառուցել համակարգի բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները՝ հաշվի առնելով սպինների համար լրկալ միմիմումի պայմանը (համակարգի *հիմնական վիճակում*):

§2.2-ում դուրս են բերված Համիլտոնիանի ստացիոնար կետի և Սիլվեստրի պայմանների անալիտիկ տեսքերը:

**Լեմմա 2.1:** Սֆերիկ կոորդինատային համակարգում Հեյզենբերգի մոտակա-հարևանների  $ID$  սպինային ապակու Համիլտոնիանն ունի հետևյալ տեսքը.

$$H_o(N_x) = - \sum_{i=0}^{N_x-1} J_{i, i+1} [\cos \psi_i \cos \psi_{i+1} \cos(\varphi_i - \varphi_{i+1}) + \sin \psi_i \sin \psi_{i+1}]:$$

**Պնդում 2.1:** Սֆերիկ կոորդինատային համակարգում լրկալ միմիմումի պայմանը  $i$ -րդ սպինի համար ունի հետևյալ տեսքը.

$$\sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v, i} [\sin \psi_v - \tan \psi_i \cos \psi_v \cos(\varphi_i - \varphi_v)] = 0, \quad \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v, i} \cos \psi_v \sin(\varphi_i - \varphi_v) = 0, \quad J_{v, i} \equiv J_{i, v}:$$

**Պնդում 2.2:** Սֆերիկ կոորդինատային համակարգում Հեյզենբերգի մոտակա-հարևան  $ID$  սպինային ապակու Համիլտոնիանի երկրորդ կարգի ածանցյալներն ունեն հետևյալ տեսքը.

$$A_{\psi_i, \varphi_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} [\cos \psi_v \cos(\varphi_v - \varphi_i) + \tan \psi_i \sin \psi_v] \right\} \cos \psi_i,$$

$$A_{\theta_i, \varphi_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} \cos \psi_v \cos(\varphi_v - \varphi_i) \right\} \cos \psi_i, \quad A_{\psi_i, \theta_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} \cos \psi_v \sin(\varphi_v - \varphi_i) \right\} \sin \psi_i :$$

**Հետևանք 2.1:** Սիլվեստրի պայմաններն ունեն հետևյալ տեսքը.

$$A_{\psi_i, \varphi_i}(\Theta_i) > 0, \quad A_{\theta_i, \varphi_i}(\Theta_i) > 0:$$

**Սահմանում 2.6:** Կայուն իդեալական համույթի էներգիայի և բևեռացվածության բաշխման ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$F_{L_x}(\varepsilon, p) = M_{L_x}(\varepsilon, p) / M_{L_x}^{full},$$

որտեղ  $\varepsilon = \varepsilon / \delta \varepsilon - \delta$  անչափացված էներգիան է, իսկ  $L_x$ -ը սպինային շղթայի երկարությունն է: Էներգիայի և բևեռացվածության առանցքները բաժանված են հետևյալ հատվածների.

$$(0 > \varepsilon_0 > \dots \varepsilon_n), (0 > p_{0;x} > \dots p_{n;x}), (0 > p_{0;y} > \dots p_{n;y}), (0 > p_{0;z} > \dots p_{n;z}), \text{ որտեղ } n \gg 1:$$

$L_x$  երկարությամբ  $ID$  կայուն տարածական սպինային շղթաների (SUC) կոնֆիգուրացիաների քանակն էներգիայի  $[\varepsilon - \delta \varepsilon, \varepsilon + \delta \varepsilon]$  և համապատասխան բևեռացումների  $[p_x - \delta p_x, p_x + \delta p_x]$ ,  $[p_y - \delta p_y, p_y + \delta p_y]$ ,  $[p_z - \delta p_z, p_z + \delta p_z]$  տիրույթներում նշանակված է  $M_{L_x}(\varepsilon, p)$ -ով, մինչդեռ բոլոր  $ID$  կայուն SUC կոնֆիգուրացիաների քանակը՝

$$M_{L_x}^{full} = \sum_{i,j,k=1}^n M_{L_x}(\varepsilon_i, p_{j;x}, p_{i;y}, p_{k;z}):$$

Անհայտ է, որ  $ID$  SUC համույթի բաշխման ֆունկցիան նորմավորված է.

$$\lim_{n \rightarrow \infty} \sum_{i,j,k=1}^n F_{L_x}(\varepsilon_i, p_{j;x}, p_{i;y}, p_{k;z}) \delta \varepsilon_i \delta p_{j;x} \delta p_{i;y} \delta p_{k;z} = \int_{-\infty}^0 d\varepsilon \int F_{L_x}(\varepsilon, p) d^3 p = 1:$$

Նշենք, որ  $p_x, p_y, p_z$  բևեռացումների ինտեգրման տիրույթները սահմանափակված են  $\pm N_x$ -ով. այսինքն շղթայում սպինների քանակությամբ:

§2.3-ում  $i$ -րդ սպինի համար դուրս է բերվել լոկալ մինիմումի անհրաժեշտ պայմանը: Դա կարևոր նախադրյալ է  $ID$  SUC իդեալական համույթի գուգահեռ սիմուլյացիայի ժամանակ օգտագործվող ալգորիթմ մշակելիս:

**Թեորեմ 2.1:** Եթե որևէ  $i$ -րդ ( $0 \leq i \leq N_x - 1$ ) սպինի համար  $H_0(N_x)$  Համիլտոնիանը բավարարում է լոկալ մինիմումի պայմանին, ապա անհրաժեշտաբար  $J_{i, i+1}^2 \geq C_i^2 + D_i^2$ , որտեղ

$$C_i = J_{i-1,i} [\sin \psi_{i-1} \cos \psi_i - \sin \psi_i \cos \psi_{i-1} \cos (\varphi_i - \varphi_{i-1})], \quad D_i = J_{i-1,i} \cos \psi_{i-1} \sin (\varphi_i - \varphi_{i-1}):$$

**Հետևանք 2.2:**  $x_i = \cos \psi_{i+1}$ ,  $y_i = \sin (\varphi_i - \varphi_{i+1})$  անհայտ փոփոխականներն ունեն հետևյալ անալիտիկ տեսքը.

$$x_i^2 = \frac{D_i^2}{J_{i,i+1}^2 y_i^2}, \quad y_i^2 = D_i^2 \frac{J_{i,i+1}^2 \cos^2 \psi_i \pm 2C_i \sqrt{J_{i,i+1}^2 - C_i^2 - D_i^2} \sin \psi_i \cos \psi_i + E_i + 2C_i^2 \sin^2 \psi_i}{J_{i,i+1}^4 \cos^4 \psi_i + 2J_{i,i+1}^2 E_i \cos^2 \psi_i + (C_i^2 + D_i^2 \sin^2 \psi_i)^2},$$

որտեղ  $E_i = -C_i^2 + D_i^2 \sin^2 \psi_i$ :

§2.4-ում մշակված է մեթոդ, որի շնորհիվ սպինային շրթան հանգույց առ հանգույց կառուցվում է մեծ հավանականությամբ: Այլ խոսքերով, սպին-սպին փոխազդեցության հաստատունի վրա գտնված է նոր  $J_{i,i+1}^2 \geq C_i^2 + D_i^2$  պայմանը, որը թույլ է տալիս արդյունավետ իրագործել սպինային շրթանների մոդելավորումը: Կատարվել են անկախ առանձին փորձեր, երբ մոտակա-հարևան սպինների միջև պատահական փոխազդեցության հաստատունն ընտրվում է տարբեր հավանականային բաշխման ֆունկցիաներից: Բերվել է Սիլվեստրի պայմանների բավարարման փորձնական հաճախությունների համեմատությունների աղյուսակը տարբեր հավանականային բաշխումների համար:

Բաշխման տեսակ	Սիմուլյացիաների քանակ	Սիլվեստրի պայմանի բավարարման քանակը	Հաճախություն (%)
Նորմալ	296	25	9
Կտրված նորմալ	296	47	16
Լոգնորմալ	270	47	17
Կտրված լոգնորմալ	270	83	31
Ցուցային	221	22	10
Կտրված Լեվի	220	181	82
Գամմա	209	11	5

Աղյուսակ 1: Սիլվեստրի պայմանների բավարարման էմպիրիկ հաճախությունների համեմատությունների աղյուսակը տարբեր հավանականային բաշխումների համար:

§2.5-ում բերված է  $ID$  SUC իդեալական համույթի զուգահեռ սիմուլյացիայի համար մշակված զուգահեռ պարզիթմի մանրամասն նկարագրությունը: Արդյունքում կառուցվում են սպինային ապակու բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները:

§2.6-ում նկարագրված են թվային մոդելավորման արդյունքները: Դիտարկվել են  $25 d_0$ ,  $100 d_0$ ,  $1000 d_0$  երկարությամբ չկարգավորված  $ID$  SUC իդեալական համույթները, որտեղ  $d_0$ -ն մոտակա-հարևան սպինների հեռավորությունն է: Սիմուլյացիայի ընթացքում ենթադրվել է, որ սպինային շրթաները կարող են լինել բևեռացված մինչև 20%, որն էլ համարժեք է, որ սպինային շրթայում սպինների գումարը լինի  $-5 \leq p \leq 5$  տիրույթում, որտեղ  $p$ -ն սպինային շրթայի բևեռացվածությունն է: Հաշվարկվել է համակարգի բևեռացվածությունն ըստ բոլոր կոորդինատների, էներգիայի միջին արժեքը, ինչպես նաև

սպին-սպին փոխազդեցության միջին արժեքն ու դիսպերսիան:

§2.7-ում նկարագրված են *ID SUC* իդեալական համույթի համար տարբեր զուգահեռ հաշվողական մոդելներ: Դրանք իրագործվել են վիդեոքարտերի և համակարգչային կլաստերների վրա: Միմուլյացիայի համար առաջարկվել է նոր *MPI/GPU* համատեղ մոտեցում:

§2.7.1-ում բերված է *MPI* իրականացման պսևոդ-կոդը: Բոլոր փորձերն արվել են կլաստերի վրա, որն ունի 4 հանգույց: Յուրաքանչյուր հանգույցն ունի 2 պրոցեսոր: *C++* լեզուն ընտրվել է որպես *MPI* իրականացման լեզու:

§2.7.2-ում բերված է *GPU* իրականացման պսևոդ-կոդը: Ինչպես ցույց է տրված, դասական Հեյզենբերգի տիպի սպինային ապակու մոդելները կիրառության այն օրինակներն են, որոնց արդյունավետությունը *GPU-ի* հնարավորություններից օգտվելիս խիստ բարձրանում է: Բոլոր փորձերն արվել են *NVIDIA Tesla C1060* քարտի վրա:

§2.7.3-ում առաջարկվել է դինամիկ ծրագրավորման մոտեցմամբ ստանալ ավելի արդյունավետ իրականացում զուգահեռ սիմուլյացիայի համար: Հիմնական գաղափարը կայանում է հետևյալում՝ բաժանել մեծ երկարությամբ սպինային շղթաները ավելի փոքր երկարությամբ առանձին սպինային շղթաների, որոնց հաշվարկները կատարվում են շատ ավելի արդյունավետ: Առանձին կտորների բազմաթիվ հաշվարկներից հետո, մեկ ընդհանուր սպինային շղթայում միավորման ճանապարհով, առաջանում են բազմաթիվ հնարավորություններ՝ տրված երկարությամբ սպինային շղթաներ կառուցելու համար:

Մշակվել է *MPI/GPU* համատեղ իրականացում: Տարբեր *CPU* պրոցեսներ կարող են զուգահեռաբար դիմել վիդեոքարտին, որն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ կարող ենք ստանալ լիովին զուգահեռացում այս մոտեցման շնորհիվ:

§2.7.4-ում բերված են *GPU* ընդդեմ *MPI* հաշվարկների արագագործության համեմատական արդյունքները: Փորձերն արվել են  $25 d_0$  երկարությամբ *ID SUC* իդեալական համույթի համար: Փորձերի արդյունքները վկայում են այն մասին, որ *MPI* իրականացումը մոտավորապես 3 անգամ ավելի արագ է, քան *GPU* իրականացումը: Արդյունքները հնարավոր է լավացնել, եթե *Tesla C1060* քարտի փոխարեն օգտագործենք *GeForce GTX 480* վիդեոքարտը, որն ունի 480 զուգահեռ միջուկներ (*GPU cores*):

Բերված են նաև *GPU* աշխատանքի ժամանակային և հիշողության վիճակագրությունները, որոնք ստացվել են “*CUDA Compute Visual Profiler*” գործիքի միջոցով:

**Երրորդ գլխում** նկարագրվում են արտաքին դաշտում չկարգավորված *ID SUC* համույթի վիճակագրական հատկությունները: Կառուցվել են բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխումները:

§3.1-ում դիտարկվում է *ID SUC* դասական համույթն արտաքին դաշտում, երբ սպինային շղթաների միջև փոխազդեցությունը բացակայում է:

**Սահմանում 3.1:** Հետևյալ արտահայտությունը

$$H_o(N_x) = - \sum_{i=0}^{N_x-1} J_{i, i+1} S_i S_{i+1} - \sum_{i=0}^{N_x-1} h_i S_i$$

կոչվում է արտաքին դաշտում Հեյզենբերգի մոտակա-հարևանների *ID* սպինային ապակի համակարգի Համիլտոնիան, որտեղ  $h_i$ -ն նկարագրում է  $x$  առանցքով ուղղված արտաքին դաշտը:

Խնդիրը կայանում է նրանում, որ պահանջվում է արտաքին դաշտում կամայական

տրված  $L_x = d_0 N_x$  երկարությամբ չկարգավորված տարածական  $ID$  սպինային շղթաների համույթի համար կառուցել համակարգի բոլոր վիճակագրական պարամետրերի բաշխման ֆունկցիաները՝ համակարգի հիմնական վիճակում:

**§3.2-ում** դուրս են բերված արտաքին դաշտում Համիլտոնիանի ստացիոնար կետի և Սիլվեստրի պայմանների անալիտիկ տեսքերը:

**Լեմմա 3.1:** Սֆերիկ կոորդինատային համակարգում Հեյզենբերգի մոտակահարևանների  $ID$  սպինային ապակու Համիլտոնիանն, հաշվի առնված արտաքին դաշտը, ունի հետևյալ տեսքը.

$$H_0(N_x) = - \sum_{i=0}^{N_x-1} \{ J_{i,i+1} [\cos \psi_i \cos \psi_{i+1} \cos(\varphi_i - \varphi_{i+1}) + \sin \psi_i \sin \psi_{i+1}] + h_i \sin \psi_i \} :$$

**Պնդում 3.1:** Սֆերիկ կոորդինատային համակարգում, հաշվի առնված արտաքին դաշտը, լրկալ միմիումնի պայմանը  $i$ -րդ սպինի համար հետևյալն է.

$$\sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} [\sin \psi_v - \tan \psi_i \cos \psi_v \cos(\varphi_i - \varphi_v)] + h_i = 0, \quad \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} \cos \psi_v \sin(\varphi_i - \varphi_v) = 0, \quad J_{v,i} \equiv J_{i,v} :$$

**Պնդում 3.2:** Սֆերիկ կոորդինատային համակարգում Հեյզենբերգի  $ID$  սպինային ապակու Համիլտոնիանի երկրորդ կարգի ածանցյալներն, հաշվի առնված արտաքին դաշտը, ունեն հետևյալ տեսքը.

$$A_{\psi_i, \varphi_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} [\cos \psi_v \cos(\varphi_v - \varphi_i) + \tan \psi_i \sin \psi_v] + h_i \tan \psi_i \right\} \cos \psi_i,$$

$$A_{\varphi_i, \psi_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} \cos \psi_v \cos(\varphi_v - \varphi_i) \right\} \cos \psi_i, \quad A_{\psi_i, \varphi_i}(\Theta_i) = \left\{ \sum_{v=i-1; v \neq i}^{i+1} J_{v,i} \cos \psi_v \sin(\varphi_v - \varphi_i) \right\} \sin \psi_i :$$

**Հետևանք 3.1:** Սիլվեստրի պայմանները տվյալ դեպքում նույնպես ունեն հետևյալ տեսքը.

$$A_{\psi_i, \varphi_i}(\Theta_i) > 0, \quad A_{\varphi_i, \psi_i}(\Theta_i) > 0 :$$

**§3.3-ում** դուրս է բերվել արտաքին դաշտում  $i$ -րդ սպինի համար լրկալ միմիումնի անհրաժեշտ պայմանը: Ռա շատ կարևոր նախադրյալ է արտաքին դաշտում  $ID$   $SUC$  իդեալական համույթի գուգահեռ սիմուլյացիայի ժամանակ օգտագործվող ալգորիթմ մշակելիս:

**Թեորեմ 3.1:** Եթե արտաքին դաշտում որևէ  $i$ -րդ ( $0 \leq i \leq N_x - 1$ ) սպինի համար  $H_0(N_x)$  Համիլտոնիանը բավարարում է լրկալ միմիումնի պայմանին, ապա անհրաժեշտաբար տեղի ունի  $J_{i,i+1}^2 \geq C_i^2 + D_i^2$ , անհավասարությունը, որտեղ

